ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

0004, Երևան, Ծովակալ Իսակովի պող. 29 Հեռ.՝ /010/ 77-81-22

Թիվ 29/1-1415 «31» 10 2019թ.

«Դերձակ» ՍՊԸ-ի տնօրեն Լ.Գրիգորյանին
Հասցե՝ ք.Երևան, Ավան, Քուչակ 16/2
(ՀՎՀՀ 00885258)

Հարգելի՛ տիկին Գրիգորյան,

«ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի և «Դերձակ» ՍՊԸ-ի միջև 11.06.2019թ. կնքված ապրանքի մատակարարման ՀՀ ՈԿ ԳՀԱՊՁԲ-19/8-2 պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Ձեր ընկերությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված հանդերձանքը:

Պայմանագրի հավելված 1-ի համաձայն՝ մատակարարման ժամկետը սահմանվել է պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 30 օրացուցային օրվա ընթացքում:

Համաձայն 09.07.2019թ. «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի և «Դերձակ» ՍՊԸ-ի միջև կնքված համաձայնագրի՝ հանդերձանքի մատակարարման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով՝ մինչև ս/թ. օգոստոսի 08-ը, սակայն՝ մինչ օրս ընկերության կողմից չի մատակարարվել 306 հատ մոխրագույն վերնաշապիկ /կարճաթև/:

Համաձայն պայմանագրի 6.2 կետի՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետների խախտման համար «Դերձակ» ՍՊԸ-ից յուրաքանչյուր ուշացման օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարված ապրանքի գնի 0,05% չափով:

Համաձայն պայմանագրի 6.4 կետի պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժն ու տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

Այսպիսով՝ պայմանագրի 6.2 կետի համաձայն՝ 31.10.2019թ. դրությամբ «Դերձակ» ՍՊԸ-ն ենթակա է տուգանքի 164348 ՀՀ դրամ՝ որպես տույժ(յուրաքանչյուր ուշացված օրվա համար կատարման ենթակա, սակայն չկատարած աշխատանքի գնի 0,05% չափով), որը հաշվանցվելու է «Դերձակ» ՍՊԸ-ին վճարման ենթակա գումարից:

Հայտնելով վերոգրյալը և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7. կետի «բ» ենթակետի պահանջները՝ «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծում է պայմանագիրը:

Միաժամանակ հիմք ընդունելով Ձեր կողմից 10.06.2019թ. ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի (պայմանագրի կատարման ապահովում) 1.3 կետը՝ տեղեկացնում

ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900018005018 հաշվեհամարին ենթակա է գանձման 1.837.080 ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գնի 10%):

ՊԵՏ,
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ՝ Մ.ԲԱԲԱՅԱՆ

Կատարողներ՝
Ս.Մկրտչյան
Է.Հակոբյան
010.77-08-79